

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Գրիգոր Մինասյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն), 2022թ. մայիսի 1-ից 7-ը:

Հրավիրող կողմը՝ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ՀՀ-ԱՄՆ ռազմավարական երկխոսության ամփոփիչ նիստին, ինչպես նաև հանդիպումներ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Դաշնային դատարանի աշխատակազմի ղեկավարի, Կոլումբիայի նահանգի դատարանի և այլ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ:

Քննարկված թեմաները՝ Հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության տրամաբանությամբ ամերիկյան գործընկերների հետ ՀՀ-ում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքին, մասնավորապես, արդարադատության ոլորտի բարեփոխումներին, այդ թվում՝ հակակոռուպցիան, ոստիկանության, դատաիրավական, ինչպես նաև արդարադատության ոլորտում ծավալված համագործակցության շրջանակն ընդլայնելուն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2022թ. մայիսի 2-ից 6-ը կայացած ՀՀ-ԱՄՆ ռազմավարական երկխոսության ամփոփիչ նիստին մասնակցելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը սույն թվականի մայիսի 1-ից 7-ը գտնվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Վաշինգտոն):

ՀՀ-ԱՄՆ ռազմավարական երկխոսության ամփոփիչ նիստի ընթացքում քննարկվել են Հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության տրամաբանությամբ ամերիկյան գործընկերների հետ ՀՀ-ում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքին, մասնավորապես՝ մարդու իրավունքներին, մեդիագրագիտությանը, սոցիալական պաշտպանությանը, արդարադատության ոլորտի բարեփոխումներին և Ոստիկանության նոր պարեկային ծառայության աջակցության ծրագրերին, դատական անկողմնակալությանը, խոսքի ազատության ամրապնդման հետ կապված առկա մարտահրավերներին, ինչպես նաև արդարադատության ոլորտում ծավալված համագործակցության շրջանակն ընդլայնելուն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Ամփոփիչ նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել սահմանային անվտանգության հետ կապված հարցերին և փոխգործակցությանը պաշտպանության ու անվտանգության ոլորտներում՝ աղետների կառավարման, պաշտպանական բարեփոխումների, բժշկական և խաղաղապահության ասպարեզներում, ինչպես նաև տնտեսական ոլորտում երկուստեք բարեկեցության խթանմանն ուղղված կառուցակարգերի, այդ թվում՝ էներգետիկ ոլորտում համագործակցությանը և երկկողմ առևտրի ու ներդրումների խորացմանն առնչվող հարցեր:

ՀՀ-ԱՄՆ ռազմավարական երկխոսության ամփոփիչ նիստի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը իր երախտագիտությունն է հայտնել ԱՄՆ-ին՝ արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում ցուցաբերած աջակցության և համատեղ իրականացվելիք այն աշխատանքների համար, որոնք ուղղված են

անկախ և արդար դատական և իրավապահ համակարգի կայացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, մարդու իրավունքների պաշտպանությանը, օրենքի գերակայության և ժողովրդավարության խթանմանը, ինչպես նաև բարձր է գնահատել ԱՄՆ-ի դերը՝ հատկապես հեղափոխությունից հետո որդեգրած արժեքների պահպանման գործում: Նա նաև ներկայացրել է այն լայնածավալ հակակոռուպցիոն բարեփոխումները, որ նախաձեռնել է Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու ընդգծել է ԱՄՆ-ի նշանակալի դերը՝ Հայաստանի արդարադատության ակադեմիայի հակակոռուպցիոն ուսումնական ծրագրերի զարգացման, ինչպես նաև կոռուպցիոն գործերով մասնագիտացած դատախազների և դատավորների հմտությունների ամրապնդման գործում: Նաև անդրադարձ է կատարվել ոստիկանական ոլորտի բարեփոխումներին և ներքին գործերի նախարարության ստեղծման անհերաժեշտությանը: ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը կարևորել է ԱՄՆ-ի գործուն աջակցությամբ իրականացվող մի շարք ծրագրերը, որոնցից են՝ օրինակ էլեկտրոնային համակարգի ներդնումը, ինչի միջոցով կթեթևանա դատարանների ծանրաբեռնվածությունը և մի շարք ծառայություններ կդառնան ավելի մատչելի:

ՀՀ-ԱՄՆ ռազմավարական երկխոսության ամփոփիչ նիստի ավարտին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանի և ամերիկացի գործընկերների միջև ստորագրվել է արդարադատության ոլորտին վերաբերող երկու համատեղ գործողությունների ծրագիր՝ հակակոռուպցիոն և իրավապահ բարեփոխումների վերաբերյալ:

Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Դաշնային դատարանի աշխատակազմի ղեկավարի, Կոլումբիայի նահանգի դատարանի և այլ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը զրուցակիցներին ներկայացրել է դատաիրավական, ինչպես նաև արդարադատության նախարարության իրավասությանն առնչվող ոլորտներում ընթացքի մեջ գտնվող մի շարք բարեփոխումները, նշված բնագավառներում ՀՀ-ում

իրականացված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքները, ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ամերիկացի գործընկերների հետ երկարամյա համագործակցությունը, ինչպես նաև բազմաշերտ գործունեությունը և այլ տեղեկություններ:

Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի ներկայացուցչի հետ (Sharayah N. Heidenhain) ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը քննարկել է գործող դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածուների վերապատրաստման կարգին առնչվող մի շարք հարցեր, կարևորվել է Արդարադատության Ակադեմիայի զարգացման համար հետագա քայլերի իրականացումը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ սույն թվականի հոկտեմբերին Օտտավայում կայանալիք համաժողովին կիրավիրվեն նաև ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչները:

Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի մյուս ներկայացուցչի հետ (Lisa Johnson) նույնպես քննարկվել է երկուստեք ստորագրված հուշագրերի մանրամասները, ինչպես նաև ներկայումս իրականացվող բարեփոխումները:

Դաշնային դատարանի ներկայացուցիչը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը քննարկել են դատական համակարգի թվայնացման գործընթացը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի հետ կապված մի շարք հարցադրումներ:

Կոլումբիայի նահանգի դատարանի ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը հետաքրքրվել է՝ ինչ ընթացակարգով է ԱՄՆ-ում տեղի ունենում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը, որ մարմիններն ունեն այս տեսակի վարույթներ հարուցելու իրավասություն, ով է քննում դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործը և որոնք են դատավորների կարգապահական պատասխանատվության իրավական հիմքերը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը մասնակցել է նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության դեսպանության կողմից կազմակերպված մի շարք այլ միջոցառումների:

Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխոսության, երկու երկրների միջև իրավական համագործակցության, դատաիրավական բարեփոխումների և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը նաև հարցազրույցներ է տվել Ամերիկայի ծայնին և Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը:

 Recoverable Signature

X



ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ

**ՀՀ արդարադատության նախարարի
տեղակալ**

Signed by: MINASYAN GRIGOR 3312830419

**Գրիգոր Մինասյան
12.05.2022թ.**